# Մ Ա Յ Ր  Ա Թ Ո Ռ  Ս Ո Ւ Ր Բ  Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն
# ՀԱՌԻՃԻ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

## Ը Ն Դ ՈՒ Ն Ե Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## 2012 - 2013 ուսպարի

Հառիճի ընծայարան (ավագ դպրոց) կարող են դիմել ՀՀ եւ արտասահմանյան երկրների այն աշակերտները, որոնք ունեն հիմնական դպրոցի վկայական եւ զավակն են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու: **Դիմումներն ընդունվում են ավագ դպրոցի բոլոր դասարաններից:**

Հառիճի ընծայարանի ավագ դպրոցը գիշերօթիկ հաստատություն է, ուսումն անվճար է. ընդունվածներն ապահովվում են անվճար կացարանով, սննդով, բժշկական օգնությամբ, համազգեստով ու գրենական պիտույքներով:

Հառիճի ընծայարանի ավագ դպրոց ընդունվելու համար դիմորդները դպրոցի տնօրինության հետ ճանաչողական բնույթի զրույց կունենան հետեւյալ նյութերի շուրջ.

1. Սուրբ Գրքի իմացություն,
2. Հայ Եկեղեցու պատմության մասին գիտելիքներ,
3. Եկեղեցական փորձառություն,
4. Ինքնաարտահայտվելու կարողություն:

Դիմումները եւ ներքոհիշյալ փաստաթղթերը անձամբ ներկայացվում են Գեւորգյան հոգեւոր ճեմարանի քարտուղարություն.

1. Դիմում,
2. Հիմնական դպրոցի վկայական,
3. Բնութագիր (նախկին դպրոցի տնօրենից),
4. Զինվորական դրության մասին փաստաթուղթ (բնօրինակը),
5. Բժշկական վավերացման տեղեկանք (086 ձեւ),
6. Երկու լուսանկար 3 X 4 չափի,
7. Անձնագրի պատճեն (կամ ծննդյան վկայականի),
8. Ինքնակենսագրություն,
9. Երաշխավորագիր թեմի առաջնորդից կամ շրջանի հոգեւոր հովվից,
10. Տեղեկանք բնակավայրից,
11. Մկրտության վկայական:

Հառիճի ընծայարանի ավագ դպրոցի 2012-2013 ուսպարվա ընդունելության հարցազրույցը անցկացվելու է օգոստոս ամսին:

Դիմումներն ընդունվում են ամեն օր, բացի կիրակիից, մարտի 20-ից մինչեւ օգոստոսի 1-ը, ժամը 10:00-16:00 (շաբաթ օրը մինչեւ ժամը 13:00):

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գեւորգյան հոգեւոր ճեմարան:

Հեռախոս (010) 517-180, (010) 517-181: